

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

Մոսկվա, «Մոսկվա» հյուրանոց

Խորապես հուզված Ձեր ծննդյան ութսուներկուերորդ տարեդարձի առթիվ, հղում ենք Ձեզ Մեր հայրապետական ողջույնը, Մեր հիացումը և եղբայրական սերը:

Ձեր կյանքը թանկ է բոլորիս համար: Դուք պետք է ապրեք տակավին երկար տարիներ համայն մեր ժողովրդի համար:

Արդ, խնդրում ենք Ձեզանից այսօրվանից իսկ դադարեցնել հացադուլը և միանալ մեզ՝ շարունակելու մեր ազգի ազատարար պայքարը:

Գրկաբաց սպասում ենք Ձեզ շուտով Մայր Հայաստան և Սուրբ Էջմիածին: Մեր օրհնությունը նաև Ձեր ազնիվ տիկնոջ և ընտանիքին:

Խաղաղություն ընդ Ձեզ: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
18 սեպտեմբեր 1990 թ.